

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«13» մարտի 2014 թ.
պետական գրանցման համարը 1111429
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
_____ Ա. Դանիելյան

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

«07» մարտի 2014 թ.

N 28-Ն

ք. Ստեփանակերտ

Հ Ր Ա Մ Ա Ն

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N768-Ն որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կանոնադրության 12-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսվարող սուբյեկտների արտահանմանն աջակցության հայտի ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԹԵՎՈՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՄՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 52-Ա որոշման հավելվածի 2-րդ բաժնի 6-րդ գլխին համաձայն արդյունաբերական կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանք արտադրողների կողմից (այսուհետ՝ Կազմակերպություն) արտադրվող ապրանքների (այսուհետ՝ Արտադրանք) համար արտահանվող երկրի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներմուծման և/կամ իրացման համապատասխանության սերտիֆիկատի կամ այլ համարժեք փաստաթղթերի (այսուհետ՝ Սերտիֆիկատ) ստացման համար կատարված ծախսերի պետական աջակցության հայտի ներկայացման կարգը:

2. Կազմակերպությունն աջակցություն ստանալու նպատակով հայտ է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն)՝ համաձայն Ձև N1-ի: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով: Հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու դեպքում Կազմակերպությունը հայտը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ ուղարկում է ստորագրված բնօրինակ փաստաթղթից սկանավորված տարբերակը:

Հայտին կից անհրաժեշտ է ներկայացնել՝

1) սերտիֆիկացնող մարմնի կողմից տվյալ Արտադրանքի համար տրված Սերտիֆիկատի պատճենը,

2) սերտիֆիկացնող մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում),

3) կատարված ծախսերը հաստատող համապատասխան փաստաթուղթ (հաշիվ ապրանքագրի և/կամ վճարման անդորրագրի պատճենները և այլն),

4) կազմակերպության և սերտիֆիկացված Արտադրանքի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն Ձև N2-ի,

5) տվյալների համապատասխանության մասին հայտարարություն՝ համաձայն Ձև N3-ի,

6) այլ տեղեկություններ դիմողի ցանկությամբ:

3. Կազմակերպությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված կեղծ փաստաթղթերի և տեղեկությունների համար:

4. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված փաստաթղթերի բացակայության և/կամ դրանցում անճշտությունների դեպքում Նախարարությունը հայտը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղյակ է պահում Կազմակերպությանը՝ առաջարկելով այդ օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում լրացնել և/կամ ուղղել անճշտությունները և բացակայող փաստաթղթերը ներկայացնել Նախարարություն:

5. Կարգի 4-րդ կետում նշված ժամկետում Կազմակերպության կողմից շտկված փաստաթղթերը Նախարարություն չներկայացնելու դեպքում հայտը մերժվում է:

6. Նախարարությունը հայտը ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Կազմակերպությանը հայտի բավարարման կամ մերժման մասին՝ հիմնավորելով մերժման պատճառները:

7. Հայտի բավարարման մասին տեղեկացումը ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպությունը Նախարարություն է ներկայացնում իր կողմից ստորագրված և կնքված (եթե կիրառելի է) պայմանագիր՝ համաձայն Ձև N4-ի:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում Կազմակերպության կողմից ստորագրված և կնքված պայմանագիր չներկայացնելու դեպքում այն զրկվում է սույն կարգի 7-րդ կետով սահմանված պայմանագիրը կնքելու իրավունքից:

9. Նախարարությունը պայմանագիրը ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և կնքում է պայմանագիրը՝ դրա մեկ օրինակը հանձնելով Կազմակերպությանը:

10. Սույն կարգի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով Կազմակերպությունը կարող է դիմել Նախարարությանը:

11. Սույն կարգով նախատեսված ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագրի» շրջանակներում նախատեսված համապատասխան ֆինանսական միջոցները:

Հ Ա Յ Տ
ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

Խնդրում ենք, համաձայն Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի N 52-Ա որոշման, ֆինանսավորել Արտադրանքի Սերտիֆիկատի(ների) համար կատարված ծախսը՝ 50 տոկոսի չափով :

Կից ներկայացնում ենք հետևյալ փաստաթղթերը՝

1. սերտիֆիկատի(ների) պատճենը,
2. սերտիֆիկացնող մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում),
3. կատարված ծախսերը հաստատող համապատասխան փաստաթուղթ (հաշիվ ապրանքագրի և/կամ վճարման անդորրագրի պատճենները և այլն),
4. կազմակերպության և սերտիֆիկացված ապրանքի վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն Ձև N2-ի,
5. տվյալների համապատասխանության մասին հայտարարություն՝ համաձայն Ձև N3-ի,
6. այլ տեղեկություններ:

Առդիր՝ _____ էջ:

Կազմակերպության անվանումը _____

Ղեկավարը _____

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

_____ 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

1. Տեղեկություն

կազմակերպության վերաբերյալ

(կազմակերպության անվանումը)

Կազմակերպության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը	Հայտի ներկայացմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված հասույթը (մլն ՀՀ դրամ)	Հայտի ներկայացմանը նախորդող տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը (մլն ՀՀ դրամ)

2. Տեղեկություն

սերտիֆիկացված ապրանքի վերաբերյալ

Ապրանքի անվանումը	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) ծածկագիրը	Արտահանվող երկիրը	Խմբաքանակը	Ապրանքի նկարագիրը	Սերտիֆիկացված ապրանքի արտահանվող խմբաքանակի արժեքը (մլն դրամ)

(կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ.Տ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ -ն հայտնում և հավաստում է, որ.

(կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը)

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի վերջին 1 /մեկ/ տարվա ընթացքում ժամկետանց պարտավորություններ՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային կամ այլ պարտադիր վճարների գծով,

3) «_____»-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը

(կազմակերպության անվանումը)

ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել
տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության
համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով
հանված կամ մարված է:

(կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 2014 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

ք. Ստեփանակերտ

« » _____ 2014 թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարար Ս. Թևոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Աջակցություն տրամադրող), մի կողմից և _____, ի դեմս _____, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Աջակցություն ստացող), մյուս կողմից, հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման գործառնական դասակարգման 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի, 08 ծրագիրը և 2014 թվականի փետրվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 52-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 2-րդ բաժնի 6-րդ զլուխը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Աջակցություն տրամադրողը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման գործառնական դասակարգման 04 բաժնի, 01 խմբի, 01 դասի, 08 «Տնտեսական զարգացման ծրագրեր» ծրագրին համապատասխան ----- հազար (-----) ՀՀ դրամը տրամադրում է Աջակցություն ստացողին որպես փոխհատուցում՝ _____ սերտիֆիկատի ստացման համար կատարված ծախսերի 50 %-ի չափով:

2. Պետական աջակցության տրամադրումը

Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո Աջակցություն տրամադրողը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը փոխանցում է Աջակցություն ստացողի հաշվարկային հաշվին:

3. Այլ դրույթներ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

4. Կողմերի իրավաբանական հասցեները

Աջակցություն տրամադրող

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարություն

ք. Ստեփանակերտ, Փետրվարի 20/1

Ստեփանակերտի ՏԳԲ

Հ/հ

(ստորագրություն)

Կ.Տ.

Աջակցություն ստացող

(ստորագրություն)

Կ.Տ.